

դապետութիւնդ: Լիջիւր ընտիր ստացաւ  
տորաց վաճառական:»

Ուղղ. յոյն ունի սեղանաւոր:

### ԽԱ.

Էջ 131. տող 22. «Իսկ մարդկան,  
որպէս ասացաւ, յորջորջանօք հայր կո-  
չեցաւ. իսկ Քրիստոսի միայն իսկութեամբ  
բնութեամբ, և ոչ յորջորջանօք է Աստուած  
հայր, և մարդկան ժամանակօք, իսկ Քրիս-  
տոսի յառաջ քան զժամանակս և զյաւի-  
տեանս, որպէս և ինքն ասաց: «Եւ արդ  
փառաւորեա՛ զիս Հայր փառօքն, զոր  
ունէի առ քեզ Հայր յառաջ քան զաշ-  
խարհս»:»

Ուղղ. կիտաղրութիւնք. իսկ Քրիստոսի  
միայն իսկութեամբ բնութեամբ և ոչ յոր-  
ջորջանօք. է Աստուած հայր և մարդկանս  
ժամանակօք, իսկ Քրիստոսի յառաջ քան  
զժամանակս և զյաւիտեանս, որպէս և  
ինքն ասաց: Եւ արդ են:.

### ԽԲ.

Էջ 140. տող 1. «Արդ յայտ եղև,  
եթէ ոչինչ պակասութիւն զօրութեանցն  
աստուածութեան, Զի վասն նորա ասէ  
զիր, թէ «Ամենայն ինչ ծառայ քո են».  
ամենայն ինչ արդարեւ ծառայ է նորա. բայց  
միայն որ որդին է, զի զատ է յամենայնէ:

Ուղղ. զօրութեանցն է աստուածու-  
թեան:... Բայց միայն որ Որդին է, զի  
ազատ է յամենայնէ: Ամենայն արարածք  
հոգեղէնք և բանականք ծառայք են աս-  
տուածութեան, բայց ի Որդին՝ որ ազատ  
է և Տէր ամենայնի ընդ Հօր. իսկ յոյն  
յաւելու և զՄ. Հոգին:

### ԽԳ.

Էջ 140. տող 16. «Զայս բան ի փորձ  
գիտաց և Նաբուգոդոնոսոր արքայ»:

Ուղղ. ի փորձայ. իւր անձի փորձով  
իմացաւ նա:

(Շարունակիլի)

Հ. ԳԱՐԲ. ՆԱԼԱԳՅԵՏԵԱՆ

## ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ՄԱՇՏՈՑԻ ՄԷՋ

ԾԱՆՕԹ. — Երկու տեսակ Մաշտոց ու-  
նինք. առաջինը, որ կը կոչուի պարզապէս  
Մաշտոց կամ փոքր Մաշտոց, կը պարու-  
նակէ հասարակ կեանքի մէջ պատահող  
սովորական արարողութիւնները, ինչպէս  
Մկրտութիւն, Պսակ, Թաղում են: Եր-  
կրորդը՝ որ կը կոչուի Մեծ կամ Մայր  
Մաշտոց, այս բոլորին հետ կը պարու-  
նակէ նաև մի քանի ուրիշ ոչ-սովորական  
արարողութիւններ, ինչպէս՝ Քահանայի  
ձեռնադրութիւն, Թաղում են: Փոքր Մաշ-  
տոցը շատ անգամ տպուած է. վերջին և  
մաքուր տպագրութիւն մ'է Էջմիածնի 1894  
թուի տիպը. ընդհակառակը Մայր Մաշ-  
տոցը քիչ անգամ տպուած է և եղած օրի-  
նակներն ալ շատ հազուադիւտ են:

Այստեղ կը հաւաքեմ Մաշտոցի բոլոր  
այն բառերը՝ որոնք չկան Առձեռնի մէջ:  
Գործածած եմ Էջմիածնի 1894 թուի փո-  
քրը Մաշտոցը (զոր կը համառոտագրեմ  
Մաշտ.) և երկու Վրեճ Մաշտոց, տպ. Պո-  
լիս 1714 և 1807. (առաջինը կը համա-  
ռոտագրեմ Մ. Մաշտ. 1714, իսկ երկրոր-  
դը՝ պարզապէս Մ. Մաշտ.):

Փոքր Մաշտոցը ամբողջապէս կը պա-  
րունակուի Մայր Մաշտոցին մէջ. բայց  
որովհետեւ այս վերջինը շատ հազուադիւտ  
է, ուստի վկայութիւնները մէջ կը բերեմ  
փոքր Մաշտոցէն: Բայց Մեծ Մաշտոցներն  
ալ իրարմէ զանազանութիւն ունին. զըլ-  
խաւոր զանազանութիւնը կը կայանայ ա-  
ղօթքներուն մէջ: Երկու մէկուն մէջ աւելի  
երկար, միւսին մէջ կրճատ ձևով են: Կան  
նաև արարողութեանց մէջ տարբերութիւն-  
ներ: Այսպէս օրինակ՝ Մ. Մաշտ. 1714  
ունի Ռոմալուայի կարգը, որուն համար  
կ'ըսէ թէ Եփրեմ Խուրիէն թարգմանեց  
«մեծ զիտապետն Հայոց Գրիգորիս Վը-  
կայասէն» (էջ 550). բայց այս կարգը  
ամբողջապէս կը պակսի 1807-ի տպա-  
գրութեան մէջ: Այս պատճառով է ահա  
որ կարդացած եմ նաև Մ. Մաշտ. 1714

տիպը և ուր որ յաւելուածներ կան և այս յաւելուածներուն մէջ նոր բառեր կան՝ քաղած և հոս դրած եմ:

Արեղայացոյ « արեղայ ըլլալու կոչուած անձը » . իսկ զարեղայացուն որ յօժարի իւր կամօքն, ի քսան ամին զշուխան հագնի և ի մոյս և ի զինւոյ կտրի. Մ. Մաշտ. 343 ա. — Նոյնը արեղայցոյ ձեռով կա. նոնազրի մէջ, տպ. Թիֆլիս 1914, էջ 187. Որ արեղացու է, ի 20 [ամին] չուխ ազանի:

Աղաւնձն « աղաւնի ձև ունեցող » . Էպիսկոպոսն առցէ ի սեղանոյն զաղաւնձն տուփ մեռունին և հեղցէ ի գազաթն սեղանոյն. Մ. Մաշտ. 173 ա:

Ամբիճք « Թաղման նախորդ և յաջորդ օրերը՝ մեռելին վրայ կատարուած կարգը » . Գան ի միւսում աւուր առաւօտեան ի գեւրեզման և ասէն զամբիճն ի բուն. Մաշտ. 543. — Բառս յառաջացած է նոյն աւարողութեան ժամանակ կարողացուած առաջին սաղմոսին առաջին տողէն՝ որ է « Երանեալ են ամբիճք ի ճանապարհի և ոյք գնան յօրէնս Տեառն » . Հայերէնի մէջ շատ անգամ աղօթիքի մը կամ երգի մը առաջին բառը վերնագրի տեղ կը ծառայէ. ինչպէս՝ Եկեացէ, Հաւատամք, Փառք ի բարձունս, Այսօր դառ, Գոհանամք, Նորաստեղծեալ, Խորհուրդ խորին, Նայեաց սիրով են, Ճշմարիտ է թէ վերի արարողութեան մէջ առաջին բառն է Երանեալ, բայց որովհետեւ Երանեալ ըսելով կը հասկցուի « Երանեալ է այր որ ոչ գնաց » սաղմոսը (և Հեզաբանը), ուստի պատշաճ համարուած է հոս երկրորդ բառը առնելու. Թէ Ամբիճք ոչ թէ յատկապէս մեռելի կարգը, այլ նոյն Սաղմոսը կը նշանակէ՝ յայտնի է անկէ որ նոյնը կը գտնենք նաև ուրիշ արարողութեանց մէջ. այսպէս օրինակ՝ Հաղորդ տալու կանոնին մէջ՝ Էս ապա ասէ զամբիճն ի բուն (Մ. Մաշտ. 35 ա), Ասագ սարկաւագի ձեռնադրութեան կանոնին մէջ՝ Ապա ասեն զամբիճն ի բուն (Մ. Մաշտ. էջ 245 բ), Աղուհացից Խաղաղական Ժամու Ժամերգութեան մէջ՝ Յաւուրս աղուհացից աստ ասի ամբիճն, իսկ յայլ

աւուրս Հայր մեր (Ժամագիրք, տպ. Վղշշպու 1903. էջ 820):

Ամպախարստ « ամպերը փարատուած, անամպ » . Միտք ձեր խառնակեալ և պրդտորեալ՝ ամպափարատ պարզ երկինց եղիցին նմանեալ. Մ. Մաշտ. 226 բ:

Ամօրահարություն « ամօթ, ամէնալը » . Թողցէ զմեզս ձեր՝ զորս գործեալ իցէք... զկամայ, զգիտութեան և զանգիտութեան, ի մոռացմանէ և յամօթահարութենէ. Մ. Մաշտ. 226 բ:

Այրոց « Թաղման երկրորդ առաւօտը՝ մեռելին վրայ կատարուած կարգը » . Մեծի Այրոցն է. Շարական աշգուցինն է. Մաշտ. 561-585. (բառարաններուն մէջ կայ այդոց « վաղը », բայց այս առումը նշանակուած չէ):

Անպարտադրելի « որ մեղաւոր չի կրնար համարուիլ » . Որ անպարտադրելի է՝ պարտաւորեցար, զի զմեզս կողածնին չարաչարանօք քո բարձցես. Մ. Մաշտ. 384 ա:

Աշխարհակոծ « աշխարհին ողբ ու կոծ պատճառող » . Ընկալ զհոգի ծառայիս քոյ, որ ելից զժամանակ պանդխտութեան նըշգեհութեան իւրոյ ի վերայ երկրի և ընկալաւ զլուծումն յերկրաւոր աշխատութեանցս և յաշխարհակոծ պարողական խաբէութեանցս. Մ. Մաշտ. 353 ա:

Աշխարհանք « աշխարհ խեղդող » . Ընկալաւ զլուծումն յաշխատութեանց և յաշխարհահեղձ պարողական խաբէութեանց. Մաշտ. 466 (նախորդին հետ նոյն է և անոր տարբերակը կը ներկայացնէ):

Ասանկեցութիւն « միանկ կենալը, մենակեցութիւն » . Ուսուցանէ նմա զլուծութիւն լեզուի և զառանձնակացութիւն. Մ. Մաշտ. 340 բ:

Աստուածսիրաւէր « Աստուծմէ հրաւիրուած ». Զժամանակս յաստուածահրաւէր կոչմունս ի կարգ քահանայութեան. Մ. Մաշտ. 270 ա:

Արդարաւստակ « արդար վաստակով ապրող, անարդար շահ չփնտռող » Պատուիրել նմա (նորաւարտ աշակերտին) լինել ճշմարտախօս, արդարաւստակ, իրաւակշիւ. Մաշտ. 688:

Արեւակցութիւն «ազգականութիւն»։ Թոռին թոռնոր է չորրորդ, որ լինի եօթներորդ և եզր արեւակցութեան. Մ. Մաշտ. 228 ա։

Գաւազանակիր «եպիսկոպոսին գաւազանը բռնած տանող անձը»։ Եւ զկնի մեռնակերին երթիցէ եպիսկոպոսն, ունեւ լով ի ձեռին զմասնատուփն՝ լի մեռնաւ սրբով. և զկնի նորին երթիցեն գաւազանակիրն և այլքն՝ բշոցօք. Մ. Մաշտ. 174 բ. Եւ ինքն եպիսկոպոսն առեալ զբուրվաւսն... և զգաւազանակիրն. Մ. Մաշտ. 184 ա։

Գեղահանձար «շատ հանձարեղ»։ Թօրինեալ սրբոյն Գրիգորի Տաթևացւոյ մեծի վարդապետի՝ գերահանձար հոեաորի. Մ. Մաշտ. 281 ա։

Գերեզմանօրհնէք «մեռելին գերեզմանը օրհնելու կարգը»։ Աստի սար գերեզման. մանք իբր և երկու բառ. պէտք է միացնել իբրև բարդ բառ)։

Գոգնոց «փէշտիմալ»։ Վեցերորդն է գոգնոց սեղանոյն, իսկ եօթներորդն է սրփոցն, զոր ի ներքոյ սկււռնի սփռնէ. Մ. Մաշտ. 176 բ, Կանոն՝ եկեղեցւոյ զգեստ օրհնելոյ, այսինքն շապիկ, ուրար, վաւաս, շուրջառ, գոգնոց և զայլս. Մ. Մաշտ. 216 բ։

Գոյափոխել «հացն ու զինին փրխտոսի մարմնին ու արեան փոխուիլը»։ Գոյափոխեցի յանապական և ի պատուական մարմին և արիւն միաձնի քո Յիսուսի փրխտոսի. Մ. Մաշտ. 177 բ։

Գորփոռայ «պատառն ի վերայ որոյ զնի տուր նշխարն ի պատարագելն»։ Թամանն՝ յորում զգորփոռայն լուանաս, մի ինչ այլ մերձեցի. Մ. Մաշտ. 243 ա։ (Այս բառը ունին Հին Հայկ. և Զախլ. բառ. իբրև փոխառութիւն լտ. corpora-lis հոմանիշէն)։

Դոնապանութիւն «զոնապանի պաշտօն, յատկապէս եկեղեցւոյ զոնապանի, որ է եկեղեցական առաջին աստիճանը»։ Առաջին կարգ աստիճանի զոնապանութեան. Ուր հրաւիրեցաւ ի պաշտօն զոնապանութեան. Մ. Մաշտ. 237 ա։

Եկեղեցաշէն «եկեղեցին շինել տուող բարերարը»։ Եպիսկոպոսն առցէ ընդ իւր զեկեղեցաշէնն և զճարտարապետն. Եկեղեցաշէնն և ճարտարապետն ըստ ամենայն հանգամանացն ըստ արժանւոյն. հանդերձ եկեղեցաշինաւն և իշխանօք և ժողովրդովք և ճարտարապետաւն և նորին գործաւորօքն. Մ. Մաշտ. 156 ա։

Եղեմնածին «եղեմ յառաջ բերող կամ եղեմէ յառաջացած»։ Հոգմն խորշակի կամ եղեմնածին սառնամանեաց դռնուութիւն. Մ. Մաշտ. 212 բ։

Երդմեցուցչութիւն «եկեղեցական երրորդ աստիճանը, երդուեցնողի պաշտօնը»։ Երրորդ կարգ աստիճանի երդմեցուցչութեան. Տուր զօրութիւն ծառայիս քո յայս գործ երդմեցուցչութեան՝ յոր ձեռնադրի. Մ. Մաշտ. 238 բ–239 ա։

Երեսպապաշտ «մարդահոծ, կեղծաւոր»։ Մի առնուլ կաշառս և մի՛ երեսպապաշտ լինիցին. Մ. Մաշտ. 337 ա։

Երեսպապակ «եօթնիցս պսակեալ»։ ճշգրտագեղ ի տիպ զանազան, եօթնապսակ ընդհոց պերճական. Մ. Մաշտ. 278 բ (Գանձ)։

Երեօրեայք «մահուան եօթներորդ օրը՝ մեռելին վրայ կատարուած կարգը»։ (Կանոն) մեծի եօթօրէիցն. Մաշտ. 586–598. (Բառարանները զիսեն եօրեօրեայ ածականներ, բայց այս ձևը չունին)։

Հ. ԱՃԱՌԻԱՆ

## Nihilismo – ՈՉՆՁԱՎԱԿՆՈՒԹԻՒՆ

Այս բառը կը գտնուի առաջին անգամ Tar-gheniew-ի (1862) «Հարք և որդիք» վէպին մէջ, որուն զխաւոր անձը անաստուած, նիւթապաշտ, բացարձակ ժառող մ'է։

Ընդհանրապէս nihilismo կը կոչուի այն ամէն վարդապետութիւն՝ որ դէպի միբժում, դէպի ոչնչութիւն կը տանի։ Օրինակի համար nihilismo gnoseologico (== ծանօթութեան ոչնչակաւութիւն) է այն՝ որ կը մերժէ ճշմարտութիւնը ճանաչալու կարելիութիւնը։ Nihilismo «logico» (== տրամաբանական ոչնչականութիւն) է ըլլալու և չըլլալու տրամասական նոյնութեան հաստատութիւնը (Hegel). և այլն։ Քաղաքականապէս, nihilismo կ'ըսուի ուսս յեղափոխականաց անիշխանական հասարակարդութիւնը (comunismo)։